ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1548/02/12

Քաղաքացիական գործ թիվ **ԵԱՔԴ/1548/02/12**
2026թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքով վերանայելու վերաբերյալ Հրաչյա Հարությունյանի բողոքը քաղաքացիական գործով ըստ Վարդան Բուռնազյանի հայցի ընդդեմ Հրաչյա Հարությունյանի՝ հրապարակայնորեն ներողություն խնդրելուն պարտավորեցնելու և վնասը հատուցելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Վարդան Բուռնազյանը պահանջել է պարտավորեցնել Հրաչյա Հարությունյանին իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, և հատուցել պատճառված 3.700.000 ՀՀ դրամ նյութական

վնասը, որից 1.000.000 ՀՀ դրամը՝ որպես վիրավորանքի հետևանքով պատճառված վնաս, 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնաս, 700.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանական ծառայության դիմաց վճարված գումար:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.07.2013 վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2013 թվականի որոշմամբ Վարդան Բուռնազյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.07.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.01.2014 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2013 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքները վերադարձվել են:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.03.2015 վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ վճռվել է Հրաչյա Հարությունյանին պարտավորեցնել Վարդան Բուռնազյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, Հրաչյա Հարությունյանից հօգուտ Վարդան Բուռնազյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում, 1.500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում. հայցը մնացած մասով մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 19.06.2015 թվականի որոշմամբ Հրաչյա Հարությունյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.03.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի որոշմամբ Վերաքննիչ դատարանի 19.06.2015 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Դատարանի 11.08.2017 որոշմամբ Հրաչյա Հարությունյանի դիմումը՝ վճիռը պարզաբանելու մասին, մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2017 թվականի որոշմամբ Հրաչյա Հարությունյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 11.08.2017 թվականի «Վճիռը պարզաբանելու դիմումը քննության առնելու մասին» որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.02.2018 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 08.12.2017 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Սույն գործով նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոք է ներկայացրել Հրաչյա Հարությունյանը (ներկայացուցիչներ Աշխեն Դաշյան ու Արայիկ Ղազարյան):

2. Դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը

Դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Սույն գործով առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված նոր հանգամանք:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Սույն գործով նոր հանգամանք է Հրաչյա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ թիվ 15028/16) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) 27.08.2024 թվականի վճիռը, որով Եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ՝

- «*Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքներում, երբ ծառայողական իրավախախտման մասին հաղորդումը ներկայացվում է աշխատանքից ազատվելուց հետո, ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության ռեժիմը չպետք է ավտոմատ կերպով դադարի կիրառվել միայն այն պատճառով, որ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են: Իրականում այդ պաշտպանությունը սկզբունքորեն կարող է կիրառվել, եթե հանրային շահ ներկայացնող տեղեկությունը ստացվել է այն ժամանակ, երբ, ելնելով իր աշխատանքային հարաբերություններից՝ «ազդարարն» ունեցել է արտոնյալ հասանելիություն այդ տեղեկությանը: Այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունները դադարում են*»,

- «*(…) սույն գործով դիմումատուն ոչ իրավաչափ վարքագծի ենթադրյալ գործողությունների մասին հաղորդումը չի ներկայացրել իրավասու պետական մարմիններին կամ մամուլին: Փոխարենը, նա ընտրել է հաղորդում ներկայացնելու ներքին ուղիները և իր հաղորդումը ներկայացրել իր նախկին աշխատավայրի ղեկավարությանը՝ ի պատասխան այդպիսի տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ վերջինիս հորդորին: Ավելին, Ընկերությունը խոստացել է, որ այդ մասին ներկայացված բոլոր հաղորդումները կմնան անանուն և գաղտնի: Դիմումատուն ներպետական դատարաններում նշել է, որ նա օգտվել է հավանական ծառայողական խախտման քննության համար Ընկերության կողմից սահմանած ընթացակարգից և իր անձնական էլեկտրոնային փոստով իր հաղորդումն ուղարկել է այն մարմին, որին վերապահված է գաղտնի ընթացակարգի մաս ներկայացվող այդպիսի հաղորդումների քննության գործառույթը: Այնուամենայնիվ, մարզային դատարանը որպես ապացույց չի ընդունել Ընկերության առցանց հայտարարության օրինակը և մերժել է դիմումատուի փաստարկները՝ նշելով, որ «ՀԷՅ»-

ում աշխատանքից հեռանալուց հետո նման հարցերի մասին հաղորդում ներկայացնելը նրա իրավասության շրջանակում չէ»,

- «(…) սույն գործի առանձնահատկությունը նաև այն փաստն է, որ դիմումատուն չի դիմել հրապարակայնորեն տարածելուն, փոխարենը նա օգտվել է հաղորդում ներկայացնելու միայն ներքին մեխանիզմից, որն ամենամոտն է եղել խնդրի աղբյուրին, եղել է առավել հարմար քննության անցկացման համար և նախատեսել է դրա համար հատուցում տրամադրելու լիազորություններ և ավելին, որը ենթադրվել է, որ պետք է լիներ խիստ գաղտնի»,

- «(…) ներպետական դատարանները դիմումատուի հաղորդման բովանդակությունը չեն դիտարկել հանրային շահի տեսանկյունից և ավելին, էապես սահմանափակել են հանրային շահ ներկայացնող հարցերի մասին ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության շրջանակը, ինչը, Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, չի սահմանափակվում զանգվածային լրատվամիջոցներով, այլ իրացվում է լայն հասարակության կողմից»

- «Դատարանը, կշռադատելով ներկայացված բոլոր շահերը, եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի՝ արտահայտվելու ազատության իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»»,

- «Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում»:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է նոր հանգամանքի հիմքով վերանայել թիվ ԵԱՔԴ/1548/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը, նոր հանգամանքի հիմքով վերանայման արդյունքում բեկանել թիվ ԵԱՔԴ/1548/02/12 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 19.06.2015 թվականի որոշումը և փոփոխել այն՝ հայցը մերժել:

<u>3. Դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը</u>

Դատական ակտը վերանայելու վերաբերյալ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) դիմելով դատարան՝ Վարդան Բուռնազյանը պահանջել է պարտավորեցնել Հրաչյա Հարությունյանին իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, և հատուցել պատճառված 3.700.000 ՀՀ դրամ նյութական վնասը, որից 1.000.000 ՀՀ դրամը՝ որպես վիրավորանքի հետևանքով պատճառված վնաս, 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնաս, 700.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանական ծառայության դիմաց վճարված գումար **(հատոր 1-ին, գ.թ 31-64)**.

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.07.2013 վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2013 թվականի որոշմամբ Վարդան Բուռնազյանի բերած վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 15.07.2013 թվականի վճիռը բեկանվել է, և գործն ուղարկվել է նոր քննության:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.01.2014 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.11.2013 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքները վերադարձվել են **(հատոր 5-րդ, գ.թ. 38-50, հատոր 5-րդ, գ.թ. 120-127, հատոր 3-րդ, գ.թ. 171-173)**.

2) Գործի նոր քննության ընթացքում Դատարանը, 03.03.2015 վճռով պատճառաբանելով, որ

- «*Հ. Հարությունյանը դիմումը գրել և Յու. Մորդվինցեվին է ներկայացրել աշխատանքից ազատվելու հինգ ամիս հետո, այսինքն՝ նա չի հանդիսացել պաշտոնատար անձ և դիմումում նշված հարցերը ի պաշտոնե չի բարձրացրել, հետևաբար դիմումի մասին տեղեկացրել է երրորդ անձի՝ Յու. Մորդվինցեվին: Այս հանգամանքից ելնելով՝ դատարանը գտնում է, որ Հրաչյա Հարությունյանի կողմից դիմումում արված արտահայտությունները կատարվել են հրապարակային ձևով, քանի որ պատասխանողը արած արտահայտություններին հաղորդակից է դարձրել մեկ երրորդ անձի: (…) Փաստ է, որ պատասխանողը դիմումը հանձնել է երրորդ անձի և իր կողմից արված արտահայտություններին հաղորդակից է դարձրել «ԻՆՏԵՌ ՌԱՕ ԵԷՍ» ԲԲ ընկերության ներքին անվտանգության տնօրինության տնտեսական անվտանգության և վարչակարգի բլոկի ղեկավար Յու.Մորդվինցևին, որի միջոցով հաղորդակից են դարձել նաև տեղեկությունները սփուգելու համար ստեղծված հանձնաժողովի անդամները»,*

- «*Հանձնաժողովը կատարելով սփուգումներ՝ արձանագրել է, որ դիմումում նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը»,*

- «*պատասխանողը դիմումում արված հետևյալ արտահայտություններով (…) վիրավորել է հայցվոր Վ. Բուռնազյանին, քանի որ դրանք հիմնված չեն որևէ փաստական հանգամանքների վրա»,*

- «*դիմումում ներկայացված մյուս դրվագներով, (…) որոնք պատասխանողի կողմից չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են Վարդան Բուռնազյանի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը, պատասխանողը զրպարտել է հայցվորին, (…) Եթե անգամ պատասխանողը չի ցանկացել զրպարտել հայցվորին, ապա դատարանը գտնում է, որ պատասխանողը ներկայացված փաստացի տվյալների նկատմամբ իր գնահատող դատողություններում չի դրսևորել բարեխիղճ մոտեցում»,*

- «*Բացի այդ, պատասխանողը չի ապացուցել նաև, որ դիմումում ներկայացված փաստացի տվյալները տվյալ իրավիճակում և իրենց բովանդակությամբ բխել են գերակա հանրային շահից, որն անմիջականորեն պայմանավորված է հասարակության*

տեղեկացված լինելու իրավունքի շահով, որ հանրության համար այդ տեղեկատվությունը զգալիորեն անհրաժեշտ է եղել և, որ հասարակությունը հետևել է այդ տեղեկությունների տարածման ընթացքին և սպասել է դրանց հետագա հրապարակմանը, քանի որ պատասխանողը դատարանին չի ներկայացրել ապացույց նշված տեղեկությունը գերակա հանրային շահով պայմանավորված լինելու վերաբերյալ: «Գերակա հանրային շահը» գնահատելիս վերոնշյալ հարցերին պատասխանելու անհրաժեշտությունը բխում է նրանից, որ զանգվածային լրատվության միջոցների վրա է դրված հասարակական հետաքրքրություն ներկայացնող ոլորտների և հարցերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում գաղափարների տարածման պարտականությունը, այլ ոչ թե՝ անհատ անձի»,

Վարդան Բուռնազյանի հայցը բավարարել է մասնակիորեն՝ վճռել է Հրաչյա Հարությունյանին պարտավորեցնել Վարդան Բուռնազյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, Հրաչյա Հարությունյանից հօգուտ Վարդան Բուռնազյանի բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում, 1.500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում **(հատոր 8-րդ, գ.թ. 106-163)**.

3) Վերաքննիչ դատարանը, 19.06.2015 թվականի որոշմամբ պատճառաբանելով, որ

- «*Հրաչյա Հարությունյանի Դիմումում պարունակվող տեղեկությունները վերաբերում են հայցվոր Վարդան Բուռնազյանին, հայցվորը նշված Դիմումում առկա տեղեկությունները չի հայտնել վերջինիս, հայտնել է փվյալ իրավիճակում որպես երրորդ անձ հանդես եկող Յու.Մորդվինցևին, ինչով և նշված Դիմումում առկա տեղեկությունները ստացել են հրապարակային բնույթ*»,

- «*իրականությանը չհամապատասխանող փաստացի փվյալները և խոսքի միջոցով հայցվորի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորելու նպատակ հետապնդող արտահայտություններ բովանդակող Դիմումը «Ինտեռ ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ-ի ներքին անվտանգության տնօրինության տնտեսական անվտանգության և վարչակարգի բլոկի ղեկավար Յու.Մորդվինցևին հանձնելը բավարար հիմք է հետևություն անելու այն մասին, որ առնվազն երրորդ անձը հաղորդակից է դարձվել հայցվորին անվանարկելուն, ինչպիսի հետևանքների հաղթահարմանն է ուղղված հրապարակային վիրավորանքից և զրպարտությունից պաշտպանության իրավական կանոնակարգումը: (…) սույն վեճի լուծման համար որևէ նշանակություն ունենալ չի կարող նույն Դիմումը գաղտնիության պայմանների պահպանմամբ իրավասու մարմնին ուղարկելը և գաղտնիության ռեժիմը կարգավորող կանոնակարգով ամրագրված դրույթները, այդ թվում նշված դիմումի «կոնֆիդենցիալ» դրոշմագրով շրջանառությունը*»,

- «*Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ Յու.Մորդվինցևը եղել է ընկերության անունից դիմումի գաղտնիությունը երաշխավորող պաշտոնատար անձը, ապա Վերաքննիչ դատարանը գտնում է, որ նշվածը հայցը մերժելու հիմք հանդիսանալ չի կարող, քանի որ փվյալ պարագայում անկախ հայցվորի հետ աշխատանքային*

հարաբերությունների և աշխատանքային պարտականությունների առկայությունից, վերջինս Վարդան Բուռնազյանի և Հրաչյա Հարությունյանի հարաբերություններում հանդես է գալիս որպես երրորդ անձ»,

Հրաչյա Հարությունյանի բերած վերաքննիչ բողոքը մերժել է, և Դատարանի 03.03.2015 թվականի վճիռը թողել է օրինական ուժի մեջ **(հատոր 9-րդ, գ.թ. 67-138)**.

4) ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, պատճառաբանելով նաև, որ «*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Մինչդեռ սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար*», 19.08.2015 թվականի որոշմամբ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է **(հատոր 10-րդ, գ.թ. 31-35)**.

5) Եվրոպական դատարանը Հրաչյա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ թիվ 15028/16) 27.08.2024 թվականի վճռով արձանագրել է, որ՝

- «*Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքներում, երբ ծառայողական իրավախախտման մասին հաղորդումը ներկայացվում է աշխատանքից ազատվելուց հետո, ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության ռեժիմը չպետք է ավտոմատ կերպով դադարի կիրառվել միայն այն պատճառով, որ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են: Իրականում այդ պաշտպանությունը սկզբունքորեն կարող է կիրառվել, եթե հանրային շահ ներկայացնող տեղեկությունը ստացվել է այն ժամանակ, երբ, ելնելով իր աշխատանքային հարաբերություններից՝ «ազդարարն» ունեցել է արտոնյալ հասանելիություն այդ տեղեկությանը: Այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունները դադարում են, աշխատավայրում բացասական հետևանքներ կրելու հարց չի կարող առաջանալ, սակայն նախկին աշխատողի նկատմամբ վրեժխնդրությունը կարող է ունենալ այլ դրսևորումներ: Կարևորն այն է, թե արդյոք նախկին աշխատակցին պատճառված վնասը եղել է գաղտնի տեղեկությունը բացահայտելու անմիջական հետևանք*»,

- «*(…) նրա հաղորդումը հիմնականում հիմնված է եղել այն տեղեկության վրա, որը նա ստացել է «ՀԷՅ»-ում աշխատելու ընթացքում: 1-ին հայտարարությունից բացի, որի աղբյուրը եղել են տեղական լրատվամիջոցները և խորհրդարանի նախկին պատգամավորի հայտարարությունը, դիմումատուն Վ. Բ.-ի կողմից ոչ իրավաչափ վարքագծի կոնկրետ դրսևորումների մասին հաղորդել է «ՀԷՅ»-ին՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք նա ստացել է աշխատանքի վայրում՝ ունենալով արտոնյալ հասանելիություն նշված տեղեկություններին՝ այդ ժամանակ հանդես գալով որպես Անվտանգության և վարչական հարցերի դեպարտամենտի պետ: Հետևաբար նա կարող է*

համարվել «այն միակ անձը կամ անձանց փոքր խմբի մասնիկը, որը տեղեկացված է եղել այն մասին, թե ինչ է կատարվում աշխատավայրում և այդպիսով, ունեցել է լավագույն հնարավորությունները գործելու ի նպաստ հանրային շահի՝ այդ մասին զգուշացնելով գործատուին կամ լայն հասարակությանը»»,

- «Դատարանը նախ նկատում է, որ ներպետական դատարանները փվյալ գործը դիտարկել են որպես զրպարտության շուրջ սովորական վեճ և չեն կիրառել վերոնշյալ սկզբունքները: Ճիշտ է, որ դիմումատուն կոնկրետ չի հիմնվել ազդարարների համար նախատեսված արտահայտվելու ազատության պաշտպանության վրա, այլ հղում է կատարել պետական պաշտոնյաների վարքագծի կանոնների խախտման մասին հաղորդումների ներկայացման վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին: Այդուհանդերձ, նա ներկայացրել է մի շարք փաստարկներ, որոնք վերաբերել են ազդարարների հետ կապված գործերի դեպքում կիրառվող չափանիշներին, և այդպիսով ներպետական դատարաններին հնարավորություն են ընձեռել իր գործի վերաբերյալ որոշում կայացնել այդ տեսանկյունից»,

- «(…) սույն գործով դիմումատուն ոչ իրավաչափ վարքագծի ենթադրյալ գործողությունների մասին հաղորդումը չի ներկայացրել իրավասու պետական մարմիններին կամ մամուլին: Փոխարենը, նա ընտրել է հաղորդում ներկայացնելու ներքին ուղիները և իր հաղորդումը ներկայացրել իր նախկին աշխատավայրի ղեկավարությանը՝ ի պատասխան այդպիսի տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ վերջինիս հորդորին: Ավելին, Ընկերությունը խոստացել է, որ այդ մասին ներկայացված բոլոր հաղորդումները կմնան անանուն և գաղտնի: Դիմումատուն ներպետական դատարաններում նշել է, որ նա օգտվել է հավանական ծառայողական խախտման քննության համար Ընկերության կողմից սահմանած ընթացակարգից և իր անձնական էլեկտրոնային փոստով իր հաղորդումն ուղարկել է այն մարմին, որին վերապահված է գաղտնի ընթացակարգի մաս ներկայացվող այդպիսի հաղորդումների քննության գործառույթը: Այնուամենայնիվ, մարզային դատարանը որպես ապացույց չի ընդունել Ընկերության առցանց հայտարարության օրինակը և մերժել է դիմումատուի փաստարկները՝ նշելով, որ «ՀԷՑ»-ում աշխատանքից հեռանալուց հետո նման հարցերի մասին հաղորդում ներկայացնելը նրա իրավասության շրջանակում չէ»,

- «(…) սույն գործի առանձնահատկությունը նաև այն փաստն է, որ դիմումատուն չի դիմել հրապարակայնորեն տարածելուն, փոխարենը նա օգտվել է հաղորդում ներկայացնելու միայն ներքին մեխանիզմից, որն ամենամոտն է եղել խնդրի աղբյուրին, եղել է առավել հարմար քննության անցկացման համար և նախատեսել է դրա համար հատուցում տրամադրելու լիազորություններ և ավելին, որը ենթադրվել է, որ պետք է լիներ խիստ գաղտնի: Ներքին քննության կոնկրետ նպատակը նրա պնդումները հաստատելը կամ հերքելն էր: Ինչպես նշվել է վերևում՝ 46 պարբերության մեջ, աշխատավայրում ենթադրյալ խախտումների հիմքով նախկին աշխատակիցներին մեղադրելու առնչությամբ ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանությունը չի կարող մերժվել միայն այն հիմքով, որ նրանց աշխատանքային հարաբերությունները դադարել են (…)

Բացի այդ, Դատարանի համար դժվար է հասկանալ, թե ինչպես են ներպետական դատարանները գտել, որ «հրապարակայնորեն» արված կարող է համարվել դիմումատուի կողմից հաղորդում ներկայացնելը Յ.Մ.-ին՝ Ընկերության տնտեսական անվտանգության և վարչական հարցերով տնօրենին, որը, ինչպես հետևում է Վերաքննիչ դատարանի որոշումից, պատասխանատու է եղել ներքին հարցման շրջանակներում ներկայացված բողոքների քննության համար (տե՛ս վերևում՝ 20 պարբերությունը)։ Ավելին, դիմումատուին իր հաղորդման գաղտնիությունն ապահովելու բոլոր միջոցները չձեռնարկելու մեջ մեղադրելիս (տե՛ս վերևում 18 պարբերությունը) մարզային դատարանը չի նշել, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկեր դիմումատուն, եթե նա գիտեր, որ ընկերությունը խոստացել է պահպանել հաղորդումների գաղտնիությունը»,

- «(…) ներպետական դատարանները դիմումատուի հաղորդման բովանդակությունը չեն դիտարկել հանրային շահի տեսանկյունից և ավելին, էապես սահմանափակել են հանրային շահ ներկայացնող հարցերի մասին ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության շրջանակը, ինչը, Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, չի սահմանափակվում զանգվածային լրատվամիջոցներով, այլ իրացվում է լայն հասարակության կողմից»

- «Դատարանը, կշռադատելով ներկայացված բոլոր շահերը, եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի՝ արտահայտվելու ազատության իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում»»,

- «Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում» **(հիմք՝ Եվրոպական դատարանի՝ Հրաչյա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ թիվ 15028/16) 27.08.2024 թվականի վճիռը, որը ներկայացվել է դատական ակտի վերանայման բողոքին կից)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ առկա է նոր հանգամանք, որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել (...) Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 416-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայում է Վճռաբեկ դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու իրավունք ունեն գործին մասնակցող անձինք և նրանց իրավահաջորդները, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, (...):

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք կարող է բերվել երեք ամսվա ընթացքում, որի հաշվարկը սկսվում է նույն օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից, (...):

Վերը նշված իրավական նորմերի վերլուծությունից բխում է, որ նոր հանգամանքով կարող է վերանայվել նաև Վճռաբեկ դատարանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը: Ընդ որում, Վճռաբեկ դատարանի դատական ակտը նոր հանգամանքներով վերանայում է Վճռաբեկ դատարանը՝ նաև գործին մասնակցող անձանց բողոքի հիման վրա:

Օրենսդիրը որպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայելու համար անհրաժեշտ պայման է նախատեսել նաև Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը հիմնավորված համարելը:

Միևնույն ժամանակ վերը նշված հիմքով դատական ակտը վերանայելու համար օրենսդիրը նախատեսել է եռամսյա ժամկետ՝ դրա հաշվարկի սկիզբը համարելով Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 1-ին հոդվածի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են նույն Կոնվենցիայի 1-ին բաժնում:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որում իրենք կողմեր են:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտեին, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:

Սահմանադրական դատարանը, 31.05.2013 թվականի թիվ ՍԴՈ-1099 և 18.09.2013 թվականի թիվ ՍԴՈ-1114 որոշումներում անդրադառնալով նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման ինստիտուտին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ տվյալ ինստիտուտի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքների վերականգնումը: Վերջինս,

իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum):

Այն դեպքում, երբ անձի սահմանադրական և/կամ կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է տվյալ անձի համար այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Այսինքն, խնդրո առարկա դեպքում, խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր է ապահովել համապատասխան դատական ակտի իրավական ուժը կորցնելու պարագայում: Բացի այդ, Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անհրաժեշտ համարելով անդրադառնալ Եվրոպական դատարանի կողմից կայացված վճռով կոնվենցիոն իրավունքի խախտում հայտնաբերվելու դեպքում տվյալ գործով կողմ համարվող պետության կողմից վճռի կատարման առնչությամբ ծագող իրավական պարտավորությունների բնույթին ու բովանդակությանը, արձանագրել է, որ Եվրոպական դատարանի վճիռները կատարելու պարտավորությունը, նախևառաջ, բխում է Կոնվենցիայի 1-ին հոդվածից, որով սահմանվում է իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար Կոնվենցիայի 1-ին բաժնում սահմանված իրավունքներն ու ազատություններն ապահովելու՝ Բարձր պայմանավորվող կողմերի պարտականությունը: Բացի այդ, Կոնվենցիան 46-րդ հոդվածում հստակ սահմանվել է, որ Կոնվենցիայի անդամ պետությունը պարտավոր է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ կատարել Եվրոպական դատարանի այն վճիռները, որոնք կայացվել են տվյալ պետության՝ որպես կողմ հանդես եկած գործերով: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի վճռի կատարման հետ կապված պետության կոնկրետ պարտականությունների բովանդակությունը Կոնվենցիայով հստակ ամրագրված չէ. այն բացահայտվել է Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի միջոցով *(տե՛ս Ռեհան Թովմասյանը և Հայկ Հարությունյանն ընդդեմ «ԿԱՆԱՉ» ԲԲԸ-ի լուծարային հանձնաժողովի թիվ 07-3080 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.03.2017 թվականի որոշումը)*:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ վճիռը, որով Եվրոպական դատարանն արձանագրում է խախտում, պատասխանող պետության համար սահմանում է իրավաբանական պարտավորություն, որը ոչ միայն վերաբերում է շահագրգիռ անձանց արդարացի փոխհատուցում վճարելուն, այլ նաև ենթադրում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընդհանուր և (կամ),

անհրաժեշտության դեպքում, անհատական միջոցների կիրառում, որոնց ձեռնարկումն անհրաժեշտ է ներպետական իրավական համակարգում Եվրոպական դատարանի արձանագրած խախտումները դադարեցնելու և դրանց հետևանքները հնարավորինս վերացնելու համար: Պետությունն ազատ է Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ Կոնվենցիայի 46-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունների կատարման միջոցների ընտրության հարցում՝ պայմանով, որ դրանք համատեղելի լինեն Եվրոպական դատարանի վճռի մեջ տեղ գտած եզրակացությունների հետ *(տե՛ս Scozzari and Giunta v. Italy գործով Եվրոպական դատարանի 13.07.2000 թվականի վճիռը, 249-րդ կետ)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ Եվրոպական դատարանի վճռի կատարմանն ուղղված անհատական միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ Կոնվենցիայի մասնակից պետությունների վրա դրվող միջազգային իրավական պարտավորությունը բովանդակային առումով ունի եռաստիճան կառուցվածք և ներառում է միմյանց հետ փոխկապված հետևյալ երեք իրավական պահանջները.

1. Եվրոպական դատարանի կողմից սահմանված արդարացի փոխհատուցումը վճարելու պարտավորությունը,

2. կոնվենցիոն իրավունքի շարունակվող խախտումը դադարեցնելու պարտավորությունը,

3. restitutio in integrum սկզբունքից բխող՝ մինչև խախտումը գոյություն ունեցած դրությունը հնարավորինս վերականգնելու պարտավորությունը:

Եվրոպական դատարանի վճռի կատարման նպատակով պետության կողմից ձեռնարկվող անհատական միջոցները հասցեագրված են դիմումատուին, կիրառվում են Կոնվենցիայի խախտման հետևանքով դիմումատուի կրած բացասական հետևանքների վերացման և, վերջին հաշվով, մինչև խախտումը եղած դրության հնարավորինս վերականգնման (միջազգային իրավունքի հանրաճանաչ restitutio in integrum սկզբունք) նպատակով *(տե՛ս Օլգա Գասպարյանն ընդդեմ Կանդրանով Ամիրխանյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունու տարածքային սփորաբաժանման թիվ ԵԷԴ/0299/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.04.2017 թվականի որոշումը)*:

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վճիռը, որով Եվրոպական դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, պատասխանող պետությանը պարտավորեցնում է դադարեցնել իրավախախտումը և դրա հետևանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը: Իսկ այն դեպքում, երբ restitutio in integrum սկզբունքի իրականացումը գործնականում հնարավոր չէ, ապա պատասխանող պետությունն ազատ է վճիռը կատարելու միջոցների ընտրության հարցում *(տե՛ս Papamichalopoulos and others v. Greece (Article 50) գործով Եվրոպական դատարանի 31.10.1995 թվականի վճիռը, 34-րդ կետ, Selçuk and Asker v. Turkey գործով Եվրոպական դատարանի 24.04.1998 թվականի վճիռը, 125-րդ կետ)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նաև փաստել է, որ միջազգային իրավական պատասխանատվության առաջնային և հիմնարար restitutio in integrum սկզբունքը ենթադրում է մինչև խախտումը գոյություն ունեցած դրության հնարավորինս վերականգնումը և քննարկվող իրավահարաբերությունների շրջանակում ընդգրկում է, inter alia, հետևյալ միջոցառումները.

- դիմումատուին առնչվող գործի վերաբացում, վերաքննություն,
- Կոնվենցիայի խախտման հանգեցնող որոշման չկատարում,
- Կոնվենցիայի խախտմամբ մերժված իրավական կարգավիճակի տրամադրում և այլն:

Ինչ վերաբերում է Եվրոպական դատարանի վճռով խախտում հայտնաբերվելու դեպքում տվյալ գործով պետության կողմից ձեռնարկվող կոնկրետ միջոցներին, ապա Եվրոպական դատարանի Մեծ պալատի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ պատասխանատու պետությունից պահանջվող միջոցառումները կախված են կոնկրետ գործի հանգամանքներից և պետք է սահմանվեն գործի վերաբերյալ Եվրոպական դատարանի կայացրած վճռի լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը *(տե՛ս Öcalan v. Turkey գործով Եվրոպական դատարանի 12.05.2005 թվականի վճիռը, 210-րդ կետ)*:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է Եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն իրավունքի խախտում հայտնաբերվելու դեպքում նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն, որը բխում է կոնվենցիոն իրավունքի խախտման դեպքում պետության կողմից անհատական միջոցառումներ ձեռնարկելու միջազգային-իրավական պարտավորությունից:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000 թվականի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին» թիվ R (2000)2 հանձնարարականը, անդրադառնալով restitutio in integrum սկզբունքի արդյունավետ երաշխավորման միջոցներին, դրանց թվում մատնանշում է գործի վերաքննությունը, նոր քննությունը, իսկ որպես գործի վերաքննության հատուկ միջոց է դիտարկվում գործի նորոգումը, այն է՝ գործի վարույթի վերաբացումը: Վերոնշյալ հանձնարարականի համաձայն՝ անհատական միջոցառումների ձեռնարկումը, մասնավորապես՝ գործի վերաբացումը, անհրաժեշտ է հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության պարագայում, ինչի պարագայում գործի վերաբացման անհրաժեշտությունը գերակայում է իրավական որոշակիության սկզբունքի մաս կազմող՝ դատական ակտերի վերջնական լինելու res judicata սկզբունքի նկատմամբ.

1. նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը պետք է իր բնույթով լինի այնպիսին, որ լուրջ կասկած հարուցի ներպետական մարմիններում բողոքարկման առարկա վարույթի ելքի արդյունքների կապակցությամբ,

2. դիմումատուն պետք է շարունակի կրել խնդրո առարկա վարույթի ելքը որոշող դատական ակտի բացասական հետևանքները, որոնք բավարար չափով չեն վերականգնվում արդարացի փոխհատուցմամբ և չեն կարող վերացվել այլ կերպ, քան տվյալ դատական ակտի վերանայմամբ կամ գործի վերաբացմամբ:

Ընդհանրացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումները՝ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ խախտված կոնվենցիոն իրավունքների վերականգնման պարտավորությունը, իրավական պետության հիմնարար սկզբունքներից ելնելով, պահանջում է խախտման արդյունքում տուժողի համար առաջացած բացասական հետևանքների վերացում: Ընդ որում, պատասխանատու պետությունից պահանջվող միջոցառումները կախված են կոնկրետ գործի հանգամանքներից և պետք է սահմանվեն տվյալ գործով Եվրոպական դատարանի կայացրած վճռի լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը: Հետևաբար, Եվրոպական դատարանի *Միեր Ալիխանյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության իրավունքի խախտում արձանագրելու պայմաններում, ներպետական դատարանների կողմից խախտված կոնվենցիոն իրավունքի վերականգնման միջոցների մեջ նախապատվությունը պետք է տրվի մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելուն (restitutio in integrum), որն իրականացվում է նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման միջոցով *(տե՛ս «ԹԵՂՈՒՏ» ՓԲԸ-ն ընդդեմ Միեր Ալիխանյանի թիվ ԼԴ/1352/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 23.04.2020 թվականի որոշումը)*:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ Վարդան Բուռնազյանը, դիմելով դատարան, պահանջել է պարտավորեցնել Հրաչյա Հարությունյանին իր պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, և հատուցել պատճառված 3.700.000 ՀՀ դրամ նյութական վնասը, որից 1.000.000 ՀՀ դրամը՝ որպես վիրավորանքի հետևանքով պատճառված վնաս, 2.000.000 ՀՀ դրամը՝ որպես զրպարտության հետևանքով պատճառված վնաս, 700.000 ՀՀ դրամը՝ որպես փաստաբանական ծառայության դիմաց վճարված գումար:

Գործի նոր քննության ընթացքում Դատարանը 03.03.2015 վճռով Վարդան Բուռնազյանի հայցը բավարարել է մասնակիորեն՝ վճռել է Հրաչյա Հարությունյանին պարտավորեցնել Վարդան Բուռնազյանի պատիվը, արժանապատվությունն ու գործարար համբավն արատավորող, իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակման համար հրապարակայնորեն ներողություն խնդրել նույն եղանակով, ինչպես հրապարակել է, Հրաչյա Հարությունյանից հօգուտ Վարդան Բուռնազյանի

բռնագանձել 500.000 ՀՀ դրամ՝ որպես վիրավորանքի համար փոխհատուցում, 1.500.000 ՀՀ դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում:

Վերաքննիչ դատարանը 19.06.2015 թվականի որոշմամբ Հրաչյա Հարությունյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 03.03.2015 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի որոշմամբ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Եվրոպական դատարանը Հրաչյա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով (գանգատ թիվ 15028/16) 27.08.2024 թվականի վճռով արձանագրել է, որ՝

- «Դատարանը համարում է, որ սույն գործի հանգամանքներում, երբ ծառայողական իրավախախտման մասին հաղորդումը ներկայացվում է աշխատանքից ազատվելուց հետո, ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանության ռեժիմը չպետք է ավտոմատ կերպով դադարի կիրառվել միայն այն պատճառով, որ աշխատանքային հարաբերություններն ավարտվել են: Իրականում այդ պաշտպանությունը սկզբունքորեն կարող է կիրառվել, եթե հանրային շահ ներկայացնող տեղեկությունը ստացվել է այն ժամանակ, երբ, ելնելով իր աշխատանքային հարաբերություններից՝ «ազդարարն» ունեցել է արտոնյալ հասանելիություն այդ տեղեկությանը: Այն դեպքերում, երբ աշխատանքային հարաբերությունները դադարում են, աշխատավայրում բացասական հետևանքներ կրելու հարց չի կարող առաջանալ, սակայն նախկին աշխատողի նկատմամբ վրեժխնդրությունը կարող է ունենալ այլ դրսևորումներ: Կարևորն այն է, թե արդյոք նախկին աշխատակցին պատճառված վնասը եղել է գաղտնի տեղեկությունը բացահայտելու անմիջական հետևանք»,

- «(…) նրա հաղորդումը հիմնականում հիմնված է եղել այն տեղեկության վրա, որը նա ստացել է «ՀԷՑ»-ում աշխատելու ընթացքում: 1-ին հայտարարությունից բացի, որի աղբյուրը եղել են տեղական լրատվամիջոցները և խորհրդարանի նախկին պատգամավորի հայտարարությունը, դիմումատուն Վ. Բ.-ի կողմից ոչ իրավաչափ վարքագծի կոնկրետ դրսևորումների մասին հաղորդել է «ՀԷՑ»-ին՝ հիմնվելով այն տեղեկությունների վրա, որոնք նա ստացել է աշխատանքի վայրում՝ ունենալով արտոնյալ հասանելիություն նշված տեղեկություններին՝ այդ ժամանակ հանդես գալով որպես Անվտանգության և վարչական հարցերի դեպարտամենտի պետ: Հետևաբար նա կարող է համարվել «այն միակ անձը կամ անձանց փոքր խմբի մասնիկը, որը տեղեկացված է եղել այն մասին, թե ինչ է կատարվում աշխատավայրում և այդպիսով, ունեցել է լավագույն հնարավորությունները գործելու ի նպաստ հանրային շահի՝ այդ մասին զգուշացնելով գործատուին կամ լայն հասարակությանը»»,

- «Դատարանը նախ նկատում է, որ ներպետական դատարանները փվյալ գործը դիտարկել են որպես զրպարտության շուրջ սովորական վեճ և չեն կիրառել վերոնշյալ սկզբունքները: Ճիշտ է, որ դիմումատուն կոնկրետ չի հիմնվել ազդարարների համար նախատեսված արտահայտվելու ազատության պաշտպանության վրա, այլ հողում է

կատարել պետական պաշտոնյաների վարքագծի կանոնների խախտման մասին հաղորդումների ներկայացման վերաբերյալ Դատարանի նախադեպային իրավունքին: Այդուհանդերձ, նա ներկայացրել է մի շարք փաստարկներ, որոնք վերաբերել են ազդարարների հետ կապված գործերի դեպքում կիրառվող չափանիշներին, և այդպիսով ներպետական դատարաններին հնարավորություն են ընձեռել իր գործի վերաբերյալ որոշում կայացնել այդ տեսանկյունից»,

- «(…) սույն գործով դիմումատուն ոչ իրավաչափ վարքագծի ենթադրյալ գործողությունների մասին հաղորդումը չի ներկայացրել իրավասու պետական մարմիններին կամ մամուլին: Փոխարենը, նա ընտրել է հաղորդում ներկայացնելու ներքին ուղիները և իր հաղորդումը ներկայացրել իր նախկին աշխատավայրի ղեկավարությանը՝ ի պատասխան այդպիսի տեղեկություններ հաղորդելու վերաբերյալ վերջինիս հորդորին: Ավելին, Ընկերությունը խոստացել է, որ այդ մասին ներկայացված բոլոր հաղորդումները կմնան անանուն և գաղտնի: Դիմումատուն ներպետական դատարաններում նշել է, որ նա օգտվել է հավանական ծառայողական խախտման քննության համար Ընկերության կողմից սահմանած ընթացակարգից և իր անձնական էլեկտրոնային փոստով իր հաղորդումն ուղարկել է այն մարմին, որին վերապահված է գաղտնի ընթացակարգի մաս ներկայացվող այդպիսի հաղորդումների քննության գործառույթը: Այնուամենայնիվ, մարզային դատարանը որպես ապացույց չի ընդունել Ընկերության առցանց հայտարարության օրինակը և մերժել է դիմումատուի փաստարկները՝ նշելով, որ «ՀԷՅ»-ում աշխատանքից հեռանալուց հետո նման հարցերի մասին հաղորդում ներկայացնելը նրա իրավասության շրջանակում չէ»,

- «(…) սույն գործի առանձնահատկությունը նաև այն փաստն է, որ դիմումատուն չի դիմել հրապարակայնորեն տարածելուն, փոխարենը նա օգտվել է հաղորդում ներկայացնելու միայն ներքին մեխանիզմից, որն ամենամոտն է եղել խնդրի աղբյուրին, եղել է առավել հարմար քննության անցկացման համար և նախատեսել է դրա համար հատուցում տրամադրելու լիազորություններ և ավելին, որը ենթադրվել է, որ պետք է լիներ խիստ գաղտնի: Ներքին քննության կոնկրետ նպատակը նրա պնդումները հաստատելը կամ հերքելն էր: Ինչպես նշվել է վերևում՝ 46 պարբերության մեջ, աշխատավայրում ենթադրյալ խախտումների հիմքով նախկին աշխատակիցներին մեղադրելու առնչությամբ ազդարարների արտահայտվելու ազատության պաշտպանությունը չի կարող մերժվել միայն այն հիմքով, որ նրանց աշխատանքային հարաբերությունները դադարել են (…) Բացի այդ, Դատարանի համար դժվար է հասկանալ, թե ինչպես են ներպետական դատարանները գտել, որ «հրապարակայնորեն» արված կարող է համարվել դիմումատուի կողմից հաղորդում ներկայացնելը Յ.Մ.-ին՝ Ընկերության տնտեսական անվտանգության և վարչական հարցերով տնօրենին, որը, ինչպես հետևում է Վերաքննիչ դատարանի որոշումից, պատասխանատու է եղել ներքին հարցման շրջանակներում ներկայացված բողոքների քննության համար (տե՛ս վերևում՝ 20 պարբերությունը): Ավելին, դիմումատուին իր հաղորդման գաղտնիությունն ապահովելու բոլոր միջոցները չձեռնարկելու մեջ մեղադրելիս (տե՛ս վերևում 18 պարբերությունը) մարզային դատարանը չի նշել, թե ինչ

միջոցներ պետք է ձեռնարկեր դիմումատուն, եթե նա գիտեր, որ ընկերությունը խոստացել է պահպանել հաղորդումների գաղտնիությունը»,

- «*(…) ներպետական դատարանները դիմումատուի հաղորդման բովանդակությունը չեն դիտարկել հանրային շահի տեսանկյունից և ավելին, էապես սահմանափակել են հանրային շահ ներկայացնող հարցերի մասին ազատ արտահայտվելու իրավունքի պաշտպանության շրջանակը, ինչը, Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, չի սահմանափակվում զանգվածային լրատվամիջոցներով, այլ իրացվում է լայն հասարակության կողմից*»

- «*Դատարանը, կշռադատելով ներկայացված բոլոր շահերը, եզրակացնում է, որ միջամտությունը դիմումատուի՝ արտահայտվելու ազատության իրավունքին «անհրաժեշտ չի եղել ժողովրդավարական հասարակությունում*»»,

- «*Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում*»:

Այսինքն՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով հիմնավորվել է Հրաչյա Հարությունյանի (սույն գործով պատասխանողի)՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական դատարանի 27.08.2024 թվականի վճիռը նոր հանգամանք է ու ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը վերանայելու հիմք:

Այսպիսով, բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը նոր հանգամանքի հիմքով վերանայելու պարագայում ենթակա է լուծման սույն գործով Վերաքննիչ դատարանի 19.06.2015 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը: Անդրադառնալով նշված վճռաբեկ բողոքին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով վճռաբեկ բողոքում նշված վճռաբեկ բողոքի հիմքերը և հիմնավորումները, բողոքը վարույթ ընդունելու հիմքերն ու հիմնավորումները, այն համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի պահանջներին, ուստի այն պետք է ընդունել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ, 408-րդ, 419-րդ, 426-րդ ու 427-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Նոր հանգամանքով դատական ակտը վերանայելու վերաբերյալ Հրաչյա Հարությունյանի բերած բողոքը բավարարել:

Նոր հանգամանքի հիմքով վերանայել ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 19.08.2015 թվականի «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը:

2. Թիվ ԵԱՔԴ/1548/02/12 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.06.2015 թվականի որոշման դեմ Հրաչյա Հարությունյանի բերած վճռաբեկ բողոքն ընդունել Վճռաբեկ դատարանի վարույթ:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***